«Աջակցություն Հայաստանում կլիմայական ռիսկերի դիմակայունությանն ուղղված ազգային ներդրումներին» ծրագրի մեկնարկի արարողությունը

2022թ. մայիսի 10-ին «Անի Պլազա» հյուրանոցում տեղի ունեցավ «Աջակցություն Հայաստանում կլիմայական ռիսկերի դիմակայունությանն ուղղված ազգային ներդրումներին» ծրագրի մեկնարկի արարողությունը:

Ծրագիրը ֆինանսավորվում է Ճապոնիայի կառավարության կողմից 900 000 ԱՄՆ դոլարի չափով և իրականացվելու է ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի կողմից՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ սերտ համագործակցությամբ: Ծրագիրը նպատակ ունի ամրապնդել Հայաստանի ընտրված մարզերի և համայնքների կարողությունները հիդրոակլիմայական մարտահրավերներին ավելի դիմացկուն դառնալու համար՝ բարելավելով ինստիտուցիոնալ և տեխնիկական կարողությունները և գործիքները բոլոր մակարդակներում:

Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիման, ՀՀ շրջակա միջավայրի նախարար պարոն Հակոբ Սիմիդյանը, Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ տիկին Նաթիա Նացվլիշվիլին, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) ներկայացուցիչը, երեք համագործակցող նախարարությունների և կլիմայի հետ կապված կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Արարողության ընթացքում պարոն Սիմիդյանը և տիկին Նացվլիշվիլին հանդես եկան ելույթներով՝ ողջունելով հյուրերին, ներկայացնելով նախագիծը և շնորհակալություն հայտնելով Ճապոնիայի կառավարությանը և Ճապոնիայի դեսպանությանը աջակցության համար: Պարոն Սիմիդյանը նշեց, որ վստահ է, որ ծրագրի շրջանակներում կատարելագործվող տեխնոլոգիական և մասնագիտական կարողություններն էապես կնպաստեն կլիմայի փոփոխության հետ կապված մարտահրավերների հաղթահարմանը: Դեսպան Ֆուկուշիման իր խոսքում հույս հայտնեց, որ այս օժանդակությունը ժամանակին և տեղին կլինի կլիմայի փոփոխության ռիսկերը նվազեցնելու և մինչև 2030 թվականը արտանետումների նախատեսված կրճատմանը հասնելու համար:

Դեսպան Ֆուկուշիման, նախարար Սիմիդյանը, ՄԱԶԾ ներկայացուցիչ Նացվլիշվիլին և այլք

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Ծրագրային փաստաթղթի ստորագրումը նախարար Սիմիդյանի և ՄԱԶԾ ներկայացուցիչ Նացվլիշվիլիի կողմից

Արարողության մասնակիցները